

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ <<Գյումրու թիվ 29 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի ուսուցչի (8 դասաժամ) թափուր տեղի համար:

Տեխնոլոգիայի ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /Ձև 1/

2. Փաստաթուղթ / դիպլոմ /՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26 –րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որոկավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն /Ձև4/ ,

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից ,մինչև հոկտեմբերի 31 –ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00 – ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա սույն թվականի նոյեմբերի 6- ին ժամը 14:00 -ին Շիրակի մարզի Գյումրու թիվ 29 հիմնական դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /031239313 0930354949/